Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 626 - Ա
որոշման

«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՋՐԱՆՑՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Սպանդարյան» ջրանցքի վերակառուցմամբ նպաստել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում ոռոգման համակարգի վերականգնմանը և բարելավմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնք, ոռոգման ընագավառ
6.	Ծրագրի բյուջեն	518,546,727 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2028 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյան» ջրանցքի վերակառուցում՝ հողային և բետոնային աշխատանքներ, շինարարական կարերի մշակում, ջրթողների կառուցում, ջրատարի վրայի կամուրջների նորոգում և վթարային ջրթողների կառուցում: Նախատեսվում է

		իրականացնել 2025 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2028 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 518,546,727 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքներ՝ 510,380,637 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի. 2) ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 5,103,806 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 3,062,283 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ